



## ՀԱՅՏԵՐԻ ՀՐԱՎԵՐ

### ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ԵՎ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանում ՄԱԶԾ-ի կողմից իրականացվող Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի (ԳԷՀ) Փոքր դրամաշնորհների ծրագիրը (ՓԴԾ) հայտարարում է դրամաշնորհային նախագծերի հայտերի հատուկ հրավեր՝ ուղղված կլիմայի փոփոխության համատեքստում երիտասարդների ներգրավվածությանը:

#### Նախապատմություն

Երիտասարդ սերունդները գրավել են յուրահատուկ դիրք՝ կապված կլիմայի փոփոխության սպառնալիքների հետ: Ի տարբերություն բնապահպանական այլ մարտահրավերների, կլիմայի փոփոխության ազդեցությունը առավելագույնս անդրադառնալու է ապագա սերունդների վրա, ովքեր ստիպված են լինելու լուծել սպառնալիքը և կյանքի կոչել արմատական վերափոխումները:

ՓԴԾ-ը իր շրջակա միջավայրի և զարգացմանն ուղղված գործողությունների համատեքստում առաջնահերթություն է տվել երիտասարդությանը՝ որպես խոցելի խմբերից մեկը: ՓԴԾ-ը այլ գործընկերների հետ համատեղ մշակում է ավելի լայն նախաձեռնություն, որի նպատակն է տեղական, ազգային և գլոբալ մակարդակներում կապ ստեղծել և աջակցել երիտասարդների կողմից կլիմայի գործողություններին և փակել բացը տեղական գործողությունների ու գլոբալ գործընթացների միջև՝ ավելի մեծ ազդեցության հասնելու համար: Այս նախաձեռնությունը նպատակաուղղված է երիտասարդությանը հզորացնելու միջոցով իրազեկության բարձրացմանը, կարողությունների զարգացմանը, կլիմայի տեղական գործնական գործողությունների օժանդակմանը, գիտելիքների և լավ փորձի փոխանակմանը, ինչպես նաև համաշխարհային մակարդակով երիտասարդների կողմից կլիմայի գործողությունների ցուցադրմանը:

Այս նորարարական ծրագիրը արդիական և առաջնային նախաձեռնություն է, որի նպատակն է օժանդակել երիտասարդության ներգրավվածության ջանքերին կլիմայի փոփոխության համատեքստում՝ ներկայացնելով գործնական լուծումներ և երիտասարդների կողմից կլիմայի փոփոխության մեղմանն ուղղված գործողություններ՝ նպաստելու ՄԱԿ-ի երիտասարդության ներգրավման ռազմավարության իրականացմանը:

#### Առաջնային թեմաներ

Երիտասարդներն ավելի շատ են գիտակցում կլիմայի փոփոխության խնդրի լրջությունը և դրա ազդեցությունները: Նրանք ունեն խանդավառություն և պատրաստակամություն՝ նպաստելու կլիմայի փոփոխության մեղմանն ուղղված գործողություններին: Այնուամենայնիվ, մասնավորապես զարգացող երկրներում երիտասարդները շատ հաճախ բախվում են իրենց գաղափարները կյանքի կոչելու խոչընդոտներին՝ իրազեկվածության, կրթության, հմտությունների ու ֆինանսավորման բացակայության պատճառով: Այս նորարարական ծրագիրը առաջարկում է անդրադառնալ այս խնդիրներին՝ հզորացնելով երիտասարդների կարողությունները և

ներգրավվելով նրանց կլիմայի փոփոխության մեղմանն ուղղված գործողություններին՝ վերապատրաստման, իրազեկման և գործնական ծրագրերի միջոցով:

**1) «Կանաչ աշխատատեղեր» երիտասարդ սերնդի համար**

- Վերականգնվող և էներգաարդյունավետ տեխնոլոգիաներ արդյունավետ օգտագործման համար, որոնք հանգեցնում են երիտասարդների զբաղվածությանը և/կամ ձեռներեցության աջակցությանը: Համապատասխան օրինակները ներառում են երիտասարդության կողմից ղեկավարվող ձեռնարկությունների ստեղծում (օրինակ՝ արևային էներգիայի ձեռներեցներ), մասնագիտական դասընթացների իրականացում (օրինակ՝ երիտասարդների համար դասընթացներ վերականգնվող տեխնոլոգիաների վերաբերյալ, արևային տեխնոլոգիաները գյուղաբնակ երիտասարդների համար և այլն)
- Երիտասարդությանն կողմից առաջարկվող նախաձեռնություններ, որոնք իրականացնում են բնության հետ կապակցված կլիմայի փոփոխության մեղմանն ուղղված լուծումներ, որոնք բերում են եկամուտների ստեղծմանը և ապրելակերպի բարելավմանը: Համապատասխան նախագծերի օրինակները ներառում են համայնքային անտառների վերականգնում, REDD + նախաձեռնություններ և այլն:

**2) Բարձրացնել երիտասարդների իրազեկվածությունը, ուժեղացնել հմտություններն ու կարողությունները՝ իրականացնելու կլիմայի փոփոխության մեղմանն ուղղված գործողություններ տեղական, ազգային և գլոբալ մակարդակներում**

Այս թեմայով ընտրված նախագծերը նախատեսում են աջակցություն երիտասարդների իրազեկվածության բարձրացմանը, ուսումնական հնարավորությունների ստեղծմանը և տեղական ու ազգային մակարդակներում երիտասարդների կողմից նախաձեռնությունների իրականացմանը: Ծրագրերը կարող են լինել տեղական և/կամ ազգային և կարող են ներառել ՔՀԿ-կառավարություն երկխոսություն, որը ուղղված է երիտասարդության և կլիմայի հարցերին, ինչպես նաև կապվում է համապատասխան ազգային և գլոբալ քաղաքականության և ծրագրերի հետ:

**Նախագծերի և հայտատու կազմակերպությունների համապատասխանելիության չափանիշներ**

- Առաջարկվող նախագծերը պետք է լինեն համարձակ, նորարարական և վերափոխող, ինչպես նաև ունենան կրկնօրինակման և ընդլայնման ներուժ
- Հաջողված նախագծերը պետք է ունենան սոցիալական ներառման ուժեղ բաղադրիչ՝ ներառյալ գենդերային հավասարությունը, կանանց հզորացումը և հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավումը
- Բոլոր հայտերը պետք է ներառեն աշխատանքների ազդեցությունը չափելու և գնահատելու հստակ պլան և քանակական արդյունք՝ համաձայն Փարիզյան համաձայնագրի ներքո Ազգային մակարդակով սահմանված ներդրումների (NDC)
- Խրախուսվում է ներգրավել լրացուցիչ ռեսուրսներ և գործընկերություններ ավելի մեծ ցանցերի հետ (ներառյալ՝ համաֆինանսավորում միջազգային հիմնադրամներից, ՀԿ-ներից և մասնավոր հատվածից):

Նախագծերի ընտրության գործընթացը և հետագա իրականացումը համապատասխանում է [ՓՂԾ-ի սահմանված չափորոշիչներին և ընթացակարգին](#): Հայտ կարող են ներկայացնել գրանցված **ազգային ՀԿ-ներ**:

**Բյուջե**

Ըստ ՓԴԾ-ի գործառնական ուղեցույցի յուրաքանչյուր դրամաշնորհային նախագծի առավելագույն գումարը չպետք է գերազանցի **50,000 ԱՄՆ** դոլար սահմանաչափը:

### **Տևողությունը**

Յուրաքանչյուր դրամաշնորհային նախագծի տևողությունը չպետք է գերազանցի **18 ամիսը**՝ ելնելով նախագծերի բնույթից:

*Նախքան ամբողջական առաջարկի ներկայացումը ՓԴԾ Ազգային Ղեկավար Կոմիտեի քննարկմանն ու հաստատմանը, խորհուրդ է տրվում ներկայացնել ծրագրի հայեցակարգ Ազգային համակարգողին նախնական գնահատման համար:*

Նախագծերի հայեցակարգերը պետք է ներկայացվեն Հայաստանում ՄԱԶԾ-ԳԷՀ ՓԴԾ Ազգային համակարգող Հովհաննես Ղազարյանի էլեկտրոնային փոստի հասցեով ([hovhannes.ghazaryan@undp.org](mailto:hovhannes.ghazaryan@undp.org)), պատճենը՝ ՓԴԾ օգնական Սվետլանա Հարությունյանին [svetlana.harutyunyan@undp.org](mailto:svetlana.harutyunyan@undp.org) հասցեով:

**Հայեցակարգերի ներկայացման վերջնաժամկետն է սեպտեմբերի 30-ը:**



Empowered lives.  
Resilient nations.

## CALL FOR PROPOSALS ON YOUTH AND CLIMATE CHANGE

The Global Environment Facility's (GEF) Small Grants Programme (SGP) project opens a special call for proposals supporting the youth engagement efforts in the context of climate change.

### Background

Young generations occupy a unique position in relation to the threat of climate change. Unlike with other environmental challenges, the most severe impacts of climate change will affect future generations, who will be forced to address the threat and make radical transformations possible.

SGP has been prioritizing youth as one of the vulnerable groups in the context of its environment and development work. SGP jointly with other partners is developing a broader initiative aiming to connect and support local, national and global youth climate actions and bridge the gap between local activities and global processes to achieve greater scale and impact. It is aimed to empower the youth through raising awareness, developing capacity, supporting practical local climate action, fostering knowledge sharing and exchange of good practices as well as showcasing youth climate action at the global level.

This Innovation Program is a timely and critical initiative aiming to support youth engagement efforts in the context of climate change by showcasing practical solutions and demonstrate youth climate action to contribute to the implementation of UN-wide youth engagement strategy.

### Program Objectives

Young people are increasingly aware of the seriousness of climate change problem and the impacts affecting them. They have enthusiasm and passion to contribute to climate action. However, youth in developing countries in particular very often face the barriers to implement their ideas, due to lack of awareness, education and skills, and funding. This Innovation Program proposes to address these issues by empowering and engaging youth to implement climate action through training, awareness and practical projects.

### Priority themes

The program will support youth-led climate projects at the local and country levels that aim to provide young people an opportunity to implement impactful and innovative local ideas. The program also hopes to identify successful approaches, which can be elevated beyond local level to help raise ambition and inspire youth at the local and country levels.

- 1) **“Green jobs” for young generation**
  - Renewable and energy efficiency technologies for productive use that result in youth employment and/or supporting youth entrepreneurship. Relevant project examples include creation of youth-led

enterprises (e.g. solar energy entrepreneurs), provision of vocational training (e.g. trainings for youth on renewable technologies; rural youth on solar technology, etc.);

- Youth-led initiatives that implement nature-based solutions to climate change, leading to income generation and improved livelihoods. Relevant projects examples include community-based forest restoration, REDD+ initiatives etc.

## **2) Develop awareness, skills and competencies of young people to lead climate action on local, national and global levels.**

The projects selected under this theme will focus on raising awareness of youth, creating learning opportunities and supporting outreach initiatives implemented by young people on local and national levels. The projects can be local and/or national and could include CSO-Government Dialogues focusing on youth and climate issues and have potential national and global policy and programme linkages.

### **Project eligibility criteria:**

- Proposals should be bold, innovative, and transformative, and have the potential for replication and scaling up;
- Successful projects should consider strong social inclusion elements, including gender equality and women's empowerment and persons with disabilities;
- All applications should explicitly state the plan for measuring and evaluating the impact of the work and show quantifiable results in line with the Nationally Determined Contributions for Paris Agreement;
- Proponents are encouraged to leverage additional resources and partnerships with larger networks (including co-financing with international foundations, NGOs and the private sector).

The project selection process and further implementation remains in line with established [SGP standards and procedures](#). The call is open to the **national** NGOs operating in Armenia.

### **Budget:**

As per the SGP Operational Guidelines, the maximum amount for each grant project should not exceed the limit of **US\$ 50,000**.

### **Duration:**

The duration of each grant project shall not exceed **18 months**, given the nature of projects.

***It is strongly advised to send project concept notes to the SGP National Coordinator for technical feedback before a full proposal is submitted to the National Steering Committee for review and approval.***

Project concepts should be submitted to Hovhannes Ghazaryan, UNDP/GEF SGP National Coordinator in Armenia via email ([hovhannes.ghazaryan@undp.org](mailto:hovhannes.ghazaryan@undp.org)), with a copy to SGP Assistant Svetlana Harutyunyan at [svetlana.harutyunyan@undp.org](mailto:svetlana.harutyunyan@undp.org).

The deadline for applications is **September 30, 2019**.